

“Գրեցաւ գիրքս ի թվին ամենայն Հայոց, ԶԹԵ, ամին ի մայրաքաղաքն ի յուսուժիայու որ թուրքն Գիրիկէ ասէ այս քաղաքիս եւ փառք աստուծոյ:”

Ամիրտովլաթայ մահուան թուականը (1496 Գեկտ. 8) յաւերժացընող յիշատակարանս բուրորովին կը պահսի Պալաթի ձեռագրին մէջ, ինչպէս նաեւ ուրիշ շատ օրինակներուն մէջ: Այս կարեւոր թուականն առաջին անգամ յայտնեց Մեծ. Ա. Տուրիկեան 1890ին, Շապին Գարահեսարէն առ իս ուղղած գրութեամբ մը<sup>1</sup>, բայց խոշոր սխալով մը՝ Չփոխանակ Զի, զոր Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեան փութաց տարակուսական հրատարակել:<sup>2</sup>

Երկրորդ անգամ հրատարակեց 1893ին մեծանունն Հ. Ղեւոնդ Վ. Արիշան, իւր Հայկական Բնագրական-Բնական յառաջաբանին մէջ, որ նախապէս լոյս տեսած է Բնագրական Հանդէսին մէջ<sup>3</sup>, սակայն փոքրիկ սխալով մը, զոր Հ. Ղեւ. Յովնանեան ալ չէ ուղղած<sup>4</sup>: Իսկ Հ. Ղեւոնդ Արիշան Զիտե. թուականը, Քրիստոսի 1497 թուականին համապատասխան կը գրէ, որ ճիշդ չէ, վասն զի (Զիտե.) 945 + 551 հաւասար է 1496ի, եւ ոչ 1497ի:

1496 Գեկտեմբեր 8. 400 տարիէն աւելի է ուրեմն որ վախճանած է մեր ժրջան բժիշկն Ամիրտովլաթ, եւ անշուշտ ի Վ. Պոլիս, եւ ո՞վ գիտէ՞ որ գերեզմանատան մէջ ամփոփուեցաւ:

Եթէ 1496ին զԱմիրտովլաթ համարինք 75 կամ 80 ամեայ, ծնած կ'ըլլայ 15<sup>րդ</sup> դարու սկիզբները, այսինքն՝ 1416—1421, եւ “Օրդուք Բեհման-Քան” գրած ատենն արդէն եղած կ'ըլլայ 45 կամ 50 տարւան, որ դիւրաւ կը հասկըցուի անոր յառաջաբանութենէն որ Ամիրտովլաթայ գրեթէ ամբողջ կենսագրութիւնն է, եւ կը յայտնէ անոր բազմամեայ բժշկական փորձառութիւնը, այլեւայլ ճանապարհորդութիւնները, եւ բազմարկած ու յոգնած կեանքը:

Այնչափ առ այժմ գրելով ինձ սեպհական “Օրդուք Բեհման-Քան” օրինակին վրայ, վերջացընելու համար կ'ըսեմ թէ՛ Չեռագրիս 131<sup>րդ</sup> էջէն կը սկսի Ախրապատինը, այսինքն Գեղարբանութիւնը, որ կ'աւարտի 343<sup>րդ</sup> էջին վրայ, ունենալով յետուստ կարեւոր յիշատակարան մը, զոր գրած է նոյն ինքն Ամիրտովլաթ

եւ որ ամբողջ գործին պարունակութեանը մասին կու տայ համառօտ եւ լիակատար տեղեկութիւն:

Ներկայ ձեռագիրը տեսած օրինակներուս ամէնէն կատարեալն եւ ընտիրն է, կատարեալքան զՊալաթի օրինակն, ինչպէս յայտնի պիտի ըլլայ, երբ յաջողիմ որ մի հրատարակ հանել տպագրութեամբ “Օրդուք Բեհման-Քան” կրկին ամբողջութիւնը, մեր նախնեաց Մատենագրութեան այս գոհարը, յանմահ յիշատակ Ամիրտովլաթ բժշկին, որ ԹԵ. դարու հայ գրիչներուն նշանաւորն եղաւ եւ նոյն դարուն հայ բժշկութեան անթառամ պսակը:

Քննա Վ. Պոլսոյ, 1 Մայիս 1899:  
Տորթ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ



### Լ Ե Զ Ո Ւ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն

#### ՀՍԵՐԷՆԻ ԲՆԱԶԱՅՆ ԵՒ ԿՐԿՆԱԿՈՐ ԲԱՌԵՐԸ (630 ԲԱՌԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ)

Հայերէն լեզուի ուսումնասիրութեան մէջ երկու գեղեցիկ եւ կարեւոր խնդիրներ կան, զորս հայ լեզուաբանութիւնը մինչեւ այսօր անխնամ թողուցեր է<sup>\*</sup>: Այս խնդիրներն են հայերէնի Բնաձայն եւ Կրկնաւոր բառերուն կազմութեան եղանակը:

Առաջնոյն համար այսչափը միայն ծանօթ է ինձ՝ որ Հ. Սերովբէ Տէրվիշեան՝ հայ լեզուաբանութեան լուրջ աշխատաւորը՝ միտք ունէր զբաղելու այս նիւթով, ինչպէս ինքը կը յայտնէ Հնդե-Բնագրական Գրքի մէջ (Վ. Պոլիս 1885): Երկրորդն իբրեւ մրցման նիւթ՝ մրցանակի դրուած էր անցեալ տարի (98 ապրիլ) Ստրասբուրգի

\* Այսինքն տպագրութեամբ դեռ չէ հրատարակած: Բայց ինք տարիներէ ի վեր կատարուած են թէ Բնաձայն եւ թէ Կրկնաւոր բառերու վրայ — կ'ենթադրուի՝ այսօր հրատարակուածէն բաւական տարբեր լեզուական հիմնոց վրայ հաստատուած եւ ստանկապէս հայ լեզուին հին տառական օրինաց վերածնելով ըստ կարծ. գ. օ. կրկնաւորներուն մէջ ը, ռ, եւ չ, դ են տառից իրար փոխանակելը կամ առնելու դերքը են նա: Պր. Աճառեան իւր ընդարձակ գրութեամբը շանացած է ըստ կարծի լիակատար գումարում մը կազմել այս կարգի հայերէն բառերուն, որ զրեթէ անհամար են, հին դասական ըստիւր լեզուէն սկսեալ մինչին եւ նոր եւ նորագոյն (նամի.) բառերն ալ ի բաց չթողով: Մանրակրկիտ է աշխատութիւնը, եւ ոչ անօգուտ լեզուաբանութեան մէջ, այնու որ նիւթ կու տայ անընդազոյն հետազոտութեան: ԵՍԲ.

1 Տես Արեւելի, Թիւ. 1946, 12/24 Յուլիս 1890:  
2 Տես Հնդե-Բնագրական 1893, Ապրիլ, էջ 112—113:  
3 Բնագրական, 1893, Մարտ, էջ 142:  
4 Հնդե-Բնագրական Գրքի մէջ Գրքի մէջ Վրայ. Մասն Ա. Տարբ. Բ. էջ 364: